ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/239

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8880-2022 գրությամբ «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.05.2022թ. թիվ ՊՆ/02/2233-2022 գրության հիման վրա, 17.05.2022թ. թիվ 26/26-1/8880-2022 գրությամբ նախաձեռնել է «Մեգամար» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մեգամար» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մեգամար» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ընթացակարգի շրջանակներում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու կրկնակի ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ հետևյալ դիրքորոշումը:

Հիշյալ հարցի շուրջ ընկերության դիրքորոշումը ներկայացնելուց առաջ հարկ է նշել, որ սույն ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ նախաձեռնվել էր ՍՑ-ՆԳ-2022/118 ծածկագրով ընթացակարգը, որի արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ պարոն Գ. Ներսիսյանը, արդարացիորեն մերժել էր նախաձեռնված ընթացակարգը:

Այսպիսով՝ 15.02.2022թ.-ին «Մեգամար» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար խորհրդանշական նվերների գնման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել և արդյունքում հաղթող է ճանաչվել հրավերի 1-ին չափաբաժնի մասով (խորհրդանշական նվերներ (ՀՀ ԶՈՒ մասնակցությամբ միջազգային միջոցառումների համար նախատեսված (մեծ)):

23.02.2022թ-ին info@armeps.am էլեկտրոնային հասցեից մեր ընկերության megamar.info@mail.ru էլեկտրոնային հասցեին ստացվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում, որով առաջարկվել է՝ ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում (10.03.2022թ վերջնաժամկետ) պատասխանել շնորհմանը և կից գրությամբ (ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության պետ Վ. Մահտեսյանի անունով) ներկայացնել հաստատված պայմանագրի նախագիծը՝ երկու օրինակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ծանուցում ստանալու օրը (23.02.2022թ-ին) armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվել է շնորհումը, իսկ, այնուհետև, ընկերության տնօրենի կողմից ստորագրվել են պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ կնքվելիք պայմանագրի (2 օրինակ), որակավորման, պայմանագրի կատարման ապահովումների բնօրինակները և կից գրությունը: Սակայն, տվյալ պահին տնօրենը

օբյեկտիվ պատճառով հնարավորություն չի ունեցել բնօրինակ (թաց) կնիքով կնքել վերը նշված փաստաթղթերը, քանի որ մեր ընկերության լիազոր ներկայացուցիչը՝ Արտաշես Համբարյանը, անձնագիր՝ (ՌԴ 4508498861, տրված 21.03.2006թ)՝ 06.02.2022թ-ից 27.02.2022թ (հիմնավորող փաստաթղթերը կցվում են) ընկերության ընթացիկ գործունեության անհրաժեշտությունից ելնելով, գործուղվել էր ՌԴ Մոսկվա քաղաք մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բանակցելու, պայմանագրեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր կնքելու նպատակով, ուստի իր հետ տարել էր նաև ընկերության կնիքը:

27.02.2022թ.-ին մեր ընկերության լիազոր ներկայացուցիչը ավարտելով գործերը ցանկացել է վերադառնալ ՀՀ, սակայն 24.02.2022թ-ին ՌԴ և Ուկրաինայի Հանրապետության միջև սկսված ռազմական գործողությունների պատճառով Մոսկվա-Երևան թռիչքները չեղարկվեցին և անկանոն գրաֆիկով պարբերաբեր հետաձգվում էին, ուստի վերջինս չէր կարողանում վերադառնալ ՀՀ:

Վերոնշյալ իրավիճակը հաշվի առնելով՝ «Մեգամար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստորագրված փաստաթղթերը հրատապ ուղարկվել են ՌԴ Մոսկվա քաղաք, որպեսզի կնքվեն և շտապ վերադարձվեն ՀՀ՝ Պատվիրատուին սահմանված ժամկետում ներկայացնելու նպատակով: Միաժամանակ, կապ է հաստատվել Պատվիրատուի ներկայացուցչի հետ և, ներկայացնելով ստեղծված իրավիճակը, առաջարկվել է պահանջվող փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային կնիքով ստորագրված: Սակայն ստացել ենք մերժում:

06.03.2022թ-ին մեր ընկերության լիազոր ներկայացուցիչը, ստանալով ստորագրված փաստաթղթերը, կնքել է դրանք և 09.03.2022թ-ին (07.03.-08.03.2022թ նախատոնական և տոնական օրերին փոստային բաժանմունքները չէին սպասարկում) ՌԴ փոստում պատվիրել է հրատապ ավիա առաքում (առավելագույնը՝ 5 աշխատանքային օր) և հիշյալ փաստաթղթերը ուղարկել Պատվիրատուի հասցեով (Պատվիրատուի ներկայացուցիչը մեզ հայտնեց, որ մինչև 18.03.2022թ. փաստաթղթերը հասնելու դեպքում, դրանք կհամարվեն սահմանված ժամկետի մեջ ստացված):

Սակայն, ցավոք, վերոհիշյալ կնքված փաստաթղթերը, մեր կամքից անկախ և մեզ անհայտ պատճառներով, չհասան Պատվիրատուին՝ ՌԴ փոստի հանձնառած ժամկետում (առավելագույնը՝ 5 աշխատանքային օր), այլ հասավ ավելի ուշ:

18.03.2022թ-ին ստացվել է արձանագրություն, որտեղ նշված է, որ հանձնաժողովը մերժել է «Մեգամար» ՍՊԸ-ի հայտը, իսկ ընթացակարգը հայտարարվել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Ուստի, հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, «Մեգամար» ՍՊԸ-ն նույն օրը հրաժարվել է ՀՀ ՊՆ կարիքների համար գնման առարկա հանդիսացող թվով 15 հատ նոթբուքներից, որոնք իր իսկ պատվերով ի պահ էին թողնվել տվյալ ապրանքատեսակի պաշտոնական ներկրող ընկերության պահեստում:

Սակայն, 12.04.2022թ.ին, մեր համար անհասկանալի և առանց որևէ իրավական հիմնավորման, շուրջ 1 ամիս առաջ չկայացած հայտարարված ընթացակարգի շրջանակներում, info@armeps.am էլեկտրոնային հասցեից մեր ընկերության megamar.info@mail.ru էլեկտրոնային հասցեին կրկին ստացվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում: Սույն ծանուցմանը կցված պայմանագրի նախագծով փոփոխված էր հրավերով սահմանված գնման ժամանակացույցը (ընթացակարգի հրավերով սահմանված էր 2022թ 1-ին եռամսյակ, իսկ նոր պայմանագիր նախագծով՝ մինչև 2022թ. հունիսի 10):

Վերը նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 15.04.2022թ. գրությունով դիմել եմ պատվիրատուի ներկայացուցչին և հայտնել, որ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի և հրավերի 9.7 կետի համաձայն՝

«Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով (10 աշխատանքային օրվա ընթացքում) նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2.Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝

Արգելվում է՝ փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ի կետի 4-րդ և 2-րդ կետի համաձայն՝

1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

ոչ մի հայտ չի ներկայացվել.

պայմանագիր չի կնքվում:

Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

(վերոհիշյալ հոդվածով օրենսդիրը հստակ արգելում է ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո շարունակել ընթացակարգը)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1)պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին

համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ

խտրական հիմունքներով կազմակերպում.

պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝

Օրինականության սկզբունքը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը, ակնհայտ է, որ օրենքով հստակ և իմպերատիվ կերպով արգելվում է պայմանագրի նախագծում կատարել բնութագրերի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխություն, պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Մեր համար անհասկանելի է՝ «Մեգամար» ՍՊԸ-ի հայտը մերժելուց, իսկ ընթացակարգը չկայացած հայտարարելուց հետո, ընկերությանը փոփոխված գնման ժամանակացույցով, այսինքն՝ գնման առարկայի փոփոխված բնութագրով, պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում ուղարկելը, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նման ընթացակարգ նախատեսված չէ: Ուստի, պնդում ենք, որ սույն ընթացակարգի շրջանակներում ցանկացած գործընթացի վերսկսումը կամ շարունակելը օրենքի ուժով անհնար է, իսկ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն՝ անվավեր:

Հարկ է նշել, որ «Մեգամար» ՍՊԸ-ն գործել է և շարունակում է գործել ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան, չի հրաժարվել կամ խուսափել պայմանագիր կնքելուց, ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ և հնարավոր միջոցները, որպեսզի մեր կամքից անկախ ստեղծված իրավիճակում կատարի իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները, սահմանված ժամկետում կնքի պայմանագիրը և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը: Մեր ընկերությունը կարևորում է գործընկերային

հարաբերությունները Պատվիրատուի հետ և 2018թ-ից համագործակցում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ: Խնդրում եմ.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ուսումնասիրելով մեր կողմից ներկայացված փաստացի հանգամանքները, օրենսդրական հիմնավորումները, ճանաչել օրինաչափ, անհրաժեշտ և բավարար մեր գործողությունները և մերժել «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության պահանջի հիման վրա նախաձեռնված ընթացակարգը»:

«Մեգամար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/239 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:15-ին և 16.06.2022թ. ժամը 10:19-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.05.2022թ. թիվ ՊՆ/02/2233-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Մեգամար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մեգամար» ՍՊԸ-ն:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի Մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել:

Կից ներկայացվում են մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/239 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:15-ին և 16.06.2022թ. ժամը 10:19-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/239 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/239 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգամար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.02.2022թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Մեգամար» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մեգամար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ գնումների կազմակերպման վարչությունը մարտի 31-ին փոստի միջոցով մասնակցից ստացել է ծրար, որը ուղարկվել է Ռուսաստանի Դաշնությունից ս/թ. մարտի 9-ին: Ծրարում առկա է եղել կնքված պայմանագիր 2 օրինակից, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների տուժանքների բնօրինակները: Քանի որ 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը միակ մասնակիցն էր, իսկ պայմանագրով նախատեսված էր ապրանքի ձեռքբերումը 1-ին եռամսյակ, և որոշում կայացրել օրենսդրությամբ սահմանված կարգով

Ընկերության հետ կնքել պայմանագիր պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.04.2022թ. էլեկտրոնային եղանակով «Մեգամար» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով որպես միակ և ընտրված մասնակից «Մեգամար» ՍՊԸ-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով առաջարկվեց կնքել պայմանագիր Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն, սակայն Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում է կայացվել Ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8880-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.05.2022թ. թիվ ՊՆ/02/2233-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, Ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգամար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.02.2022թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Մեգամար» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մեգամար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ գնումների կազմակերպման վարչությունը մարտի 31-ին փոստի միջոցով մասնակցից ստացվել է ծրար, որը ուղարկվել է Ռուսաստանի Դաշնությունից ս/թ. մարտի 9-ին: Ծրարում առկա է եղել կնքված պայմանագիր 2 օրինակից, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների տուժանքների բնօրինակները: Քանի որ 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը միակ մասնակիցն էր, իսկ պայմանագրով նախատեսված էր ապրանքի ձեռքբերումը 1-ին եռամսյակ, և որոշում կայացրել օրենսդրությամբ սահմանված կարգով

Ընկերության հետ կնքել պայմանագիր պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.04.2022թ. էլեկտրոնային եղանակով «Մեգամար» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով որպես միակ և ընտրված մասնակից «Մեգամար» ՍՊԸ-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով առաջարկվեց կնքել պայմանագիր Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն, սակայն Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում է կայացվել Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է հետևյալը. «18.03.2022թ-ին ստացվել է արձանագրություն, որտեղ նշված է, որ հանձնաժողովը մերժել է «Մեգամար» ՍՊԸ-ի հայտը, իսկ ընթացակարգը հայտարարվել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Ուստի, հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, «Մեգամար» ՍՊԸ-ն նույն օրը հրաժարվել է ՀՀ ՊՆ կարիքների համար գնման առարկա հանդիսացող թվով 15 հատ նոթբուքներից, որոնք իր իսկ պատվերով ի պահ էին թողնվել տվյալ ապրանքատեսակի պաշտոնական ներկրող ընկերության պահեստում:

Սակայն, 12.04.2022թ.ին, մեր համար անհասկանալի և առանց որևէ իրավական հիմնավորման, շուրջ 1 ամիս առաջ չկայացած հայտարարված ընթացակարգի շրջանակներում, info@armeps.am էլեկտրոնային հասցեից մեր ընկերության megamar.info@mail.ru էլեկտրոնային հասցեին կրկին ստացվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում: Սույն ծանուցմանը կցված պայմանագրի նախագծով փոփոխված էր հրավերով սահմանված գնման ժամանակացույցը (ընթացակարգի հրավերով սահմանված էր 2022թ. 1-ին եռամսյակ, իսկ նոր պայմանագիր նախագծով՝ մինչև 2022թ. հունիսի 10)»:

Ուսումնասիրելով Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն և դրանք համադրելով գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ սահմանված պահանջների հետ՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանվում է, որ ***գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշներն ու դրանց գնման և վճարման պայմաններն են:***

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. ***Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները***՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, կանխավճարի չափի կամ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.7 ենթակետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի համաձայն՝

Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ պայմանագիր չի կնքվում:

Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝

Հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, ***հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 29-րդ կետի համաձայն՝ ***գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում*** անգործության ժամկետը

լրանալու, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում ***դրա հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:***

Այսպես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրել է, որ «Մեգամար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում է կայացրել Ընկերության հայտը մերժելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ, /սույն մասով առկա է 07.04.2022թ. կայացված ՍՑ-ՆԳ-2022/118 իրավապարտադիր որոշում/, որից հետո՝ 04.04.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ գնումների կազմակերպման վարչությունը մարտի 31-ին փոստի միջոցով Ընկերությունից ստացել է ծրար, որն ուղարկվել է Ռուսաստանի Դաշնությունից ս/թ. մարտի 9-ին և որոշում է կայացրել պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով Ընկերության հետ կնքել պայմանագիր, արդյունքում՝ 04.05.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կրկին որոշում է կայացրել Ընթացակարգը հայտարարել չկայացած, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով որպես միակ և ընտրված մասնակից «Մեգամար» ՍՊԸ-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել:

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Մինչդեռ՝ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունների հաջորդականությունն և հաշվի առնելով վերը նշվածը, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնման գործընթացն իրականացվել է օրենքով և կարգով սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ, այն է՝ իրականացրել է այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չէ օրենքով, քանի որ օրենքի իմպերատիվ պահանջի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում դրա հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված, այսինքն՝ Ընթացակարգը

չկայացած հայտարարվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի լիազորությունները դադարում են, հետևաբար վերջինս իրավասու չէ շարունակել ընթացակարգը, ընդ որում՝ մասնակցի հայտը վավեր է մինչև հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը, մինչդեռ՝ 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը մերժելու և Ընթացակարգը պայմանագիր չկնքվելու հիմքով չկայացած հայտարարելուց հետո 04.04.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ շարունակել է Ընթացակարգը և կրկին որոշում է կայացրել Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, ընդ որում՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով:

Ինչ վերաբերում է պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով Ընկերությանը երկրորդ անգամ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելուն, ապա արձանագրում եմ, որ սույն մասով ևս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում, քանի որ օրենսդիրը արգելում է պայմանագրի նախագծում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեն գնման առարկայի բնութագրերի փոփոխմանն, այդ թվում՝ գնման ժամանակացույցի, քանի որ այն հանդիսանում է գնման առարկայի բաղկացուցիչ մաս:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ ոչ իրավաչափ Ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 17.05.2022թ. թիվ 26/26-1/8880-2022 գրությամբ «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**